ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՄՈՒՇԵՂ ՂԱՐԻԲՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 101-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 3-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «Մուշեղ Ղարիբյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

1. Մուշեղ Ղարիբյանը (օրինական ներկայացուցիչ՝ Է. Ղարիբյան, ներկայացուցիչներ՝ Գ. Գալիկյան, Ա. Ղազարյան) 2021 թվականի մայիսի 24-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 23-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը,

Կամ

Բացահայտել վիճարկվող դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը»:

2. Դիմողը նշում է, որ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթը, համաձայն որի՝ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը, ամբողջությամբ հակասում է Սահմանադրությանը և խախտում է իր անձնական ազատության իրավունքը:

Դիմողը վկայակոչել է մի շարք միջազգային իրավական փաստաթղթեր, որոնց վերլուծության արդյունքում եզրակացրել է, որ միջազգային կոնվենցիաները, ի տարբերություն ներպետական օրենսդրության, կարևորում են անձի հոգեկան վիճակը, այլ ոչ թե հոգեկան հիվանդության առկայությամբ պայմանավորված՝ անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթի առնչությամբ դիմողը նշում է, որ հոգեբուժական կազմակերպության հոգեբուժական հանձնաժողովի եզրակացության հիման վրա **դատարանը կարող է** որոշում կայացնել նաև բժշկական բնույթի հարկադրանքի միջոցի տեսակը փոխելու մասին: Դիմողի կարծիքով քրեահրավական նորմին տրված մեկնաբանությամբ ակնհայտ է դառնում այն, որ բժշկական բնույթի հարկադրանքի տեսակի փոփոխման հարցի քննության ընթացքում գործը քննող դատարանի համար բժշկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը չի կրում որոշիչ նշանակություն:

Ըստ դիմողի՝ բժշկական բնույթի հարկադրանքի տեսակի փոփոխման վերաբերյալ հարցի քննության ընթացքում դատարանի գործողությունները պետք է բխեն փորձագիտական եզրակացությունից և որևէ կերպ չհակասեն դրան:

Դիմողի գնահատմամբ՝ թիվ ԵԴ/0031/14/20 գործով ոտնահարվել է իր արժանապատվության իրավունքը, իսկ անձնական ազատության իրավունքի խախտումն արտահայտվել է նրանով, որ ունենալով հոգեկան հիվանդություն, սակայն հանրության համար վտանգ չներկայացնելով, ըստ էության 2018թ. մարտի 21-ից ենթարկվում է ընդհանուր տիպի հոգեբուժական բաժանմունքում հարկադիր բուժման: Այլ կերպ ասած՝ դիմողի կարծիքով 2018թ. մարտի 21-ից ներառյալ մինչև Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի կազմման պահը ոտնահարվում են իր՝ Սահմանադրությամբ ամրագրված արժանապատվության, ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության իրավունքները:

3. Ուսումնասիրելով սույն անհատական դիմումը և վերջինիս կից ներկայացված՝ Բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման հանձնաժողովի թիվ 57 եզրակացությունը, ինչպես նաև դատական ակտերը, ղեկավարվելով «Սահմանադրա-

կան դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ ներքոնշյալ պատճառաբանություններով.

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է այն հիմքերը, որոնց միաժամանակյա առկայության պարագայում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են. ա) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտը, բ) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները, և վիճարկվում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Նույն օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է. «Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում՝ սույն օրենքի 69-րդ հոդվածով նախատեսված այլ դեպքերում»: Իսկ նշված օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը, ի լրումն սույն օրենքի 29-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է»:

Սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշման համաձայն՝ Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս, ըստ ձևի ներկայացվող պահանջների կատարման հետ մեկտեղ անհրաժեշտ է նաև բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե անձի սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալվում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում: Մասնավորապես, նշված որոշման համաձայն՝ «... դիմողը պետք է փորձի բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորել, թե իր սահմանադրական որ իրավունքներն են խախտվել և ինչ անմիջական պատճառահետևանքային կապ է առկա վիճարկվող օրինադրույթի և իր իրավունքների խախտման փաստի միջև: Նշված պա-

հանջին համապատասխան՝ դիմողը պետք է նաև դիմումում առաջադրված հարցի հիմքում ներկայացնի իրավաբանորեն փաստված հանգամանքներ և նյութեր ...:

(...)

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, երբ, թեև դրանում բարձրացված հարցը ենթակա է սահմանադրական դատարանի քննությանը, այնուամենայնիվ, դիմումում չեն բերվում բավարար իրավական փաստարկներ այն հիմնավորելու համար»:

Քննարկվող դեպքում դիմողը խնդրում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1-ին, 23-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ հոդվածներին հակասող և անվավեր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասն այն առումով, որ համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերը, ի տարբերություն ներպետական օրենսդրության, **կարևորում են անձի հոգեկան վիճակը,** այլ ոչ թե հոգեկան հիվանդության առկայությամբ պայմանավորված՝ անձի կատարած արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը:

ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ դիմողը փաստարկում է, որ քրեաիրավական նորմին տրված մեկնաբանությամբ ակնհայտ է դառնում այն, որ բժշկական բնույթի հարկադրանքի տեսակի փոփոխման հարցի քննության ընթացքում գործը քննող դատարանի համար բժշկական հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը չի կրում որոշիչ նշանակություն:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի ուժով բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելիս դատարանը հաշվի է առնում ոչ միայն արարքի բնույթն ու հանրության համար վտանգավորության աստիճանը (ինչպես որ դիմողն է նշում), **այլ նաև անձի հոգեկան հիվանդությունը, այսինքն՝ տվյալ դեպքում օրենսդիրը կարևորում է նաև անձի հոգեկան վիճակը հաշվի առնելու հանգամանքը:**

Ընդ որում, վերը նշված՝ Բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման հանձնաժողովի թիվ 57 եզրակացությունից ակնհայտ է դառնում, որ հանձնաժողովը սույն գործով դիմողի հիվանդության առնչությամբ օգտագործում է «այն կարող է ավարտվել լավացումով» արտահայտությունը, **ինչից չի բխում, որ անձը տվյալ պա-**

հին լավացել է: Մյուս կողմից, դիմողի գործով վերաքննիչ դատարանն իր որոշման հիմնավորման համար հաստատված է համարել այն փաստը, որ մինչև իրեն վերագրվող արարքները կատարելը սույն գործով դիմողն ունեցել է բազմաթիվ հոսպիտալացումներ, որոնց արդյունքում վերջինիս առողջական վիճակը **ոչ միայն չի բարելավվել,** այլև կատարել է առանձնապես ծանր հանցագործությունների շարքին դասվող արարքներ: Այդ հիմքով դատարանը գտել է, որ բուժման տևողությունը բավարար չէ արձանագրելու, որ տվյալ անձը հոգեբուժական հիվանդանոցում բուժումը շարունակելու կարիք չունի, և նրա նկատմամբ կարող է կիրառվել ամենամեղմ ռեժիմ ունեցող հարկադրանքի միջոցը:

Հետևաբար՝ Սահմանադրության՝ դիմողի վկայակոչած հոդվածների շրջանակներում վերջինիս բերած փաստարկները տվյալ դեպքում չեն կարող դիտարկվել որպես դիմումի պատշաճ հիմնավորում, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ դիմողի փաստարկներն իրականում առնչվում են իր գործով վերաքննիչ դատարանի դատական ակտի իրավաչափությանն այն առումով, որ վերջինս հաշվի չի առել Բժշկական բնույթի հարկադրական միջոցների վերանայման հանձնաժողովի թիվ 57 եզրակացությունը: Այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 3-րդ մասի առնչությամբ ձևականորեն բարձրացնելով սահմանադրականության հարց՝ դիմողն իրականում վիճարկում է դատական ակտի իրավաչափությունը, որպիսի հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ սույն անհատական դիմումն ակնհայտ անհիմն է, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի առնչությամբ՝ դիմողի բարձրացրած հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանին:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

«Մուշեղ Ղարիբյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

25 հունիսի 2021 թվականի
ՍԴԱՈ-128